ԷՋԵՐ ԼԵՎՈՆ Բ ՌՈՒԲԻՆՅԱՆԻ ԵՎ ՌՈՒԲԵՆ Գ-Ի ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1180-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Արամ Հովհաննիսյան

Լևոն Բ Ռուբինյանի և Ռուբեն Գ-ի հարաբերությունների պատմության հետազոտությունը Կիլիկիայի հայկական պետության պատմության ամենահետաքրքիր շրջաններից է: Դրանցում հատկապես կարևոր նշանակություն ունի 1180-ական թվականների սկզբի գործունեության ուսումնասիրությունը, քանի որ մինչև օրս էլ ժամանակակից հետազոտողներից և ոչ մեկը պատշաճ ուշադրություն չի դարձրել այդ կարևոր ժամանակահատվածին: Մեր հետազոտության նպատակն է լրացնել այդ բացը:

Հայտնի է, որ Լևոն Բ Ռուբինյանի մանկության և երիտասարդության տարիների պատմության մասին ընդհանրապես միջնադարյան աղբյուրներում շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Նույնը կարելի է ասել նաև Ռուբեն Գ-ի հետ կապված: Թերևս բացառություն է կազմում 13-18-րդ դարերի մանր ժամանակագիրներից մեկի վկայումը այն մասին, որ Լևոնի և նրա գործունեության մասին ժամանակակիցները գրել են մանրամասն պատմություն, որը դժբախտաբար մեզ չի հասել[1]:

Այսպես՝ Լևոն Բ Ռուբինյանը և իր եղբայրը՝ Ռուբեն Գ-ն Ռուբինյանների հայտնի ընտանիքից էին, նրանց հայրը Ստեփանե Ռուբինյանն էր: Մայրը՝ Ռիտան, իշխան Բակուրանի և Վասակի քույրն էր: Երկու եղբայրները ժամանակի ընթացքում դարձան Կիլիկիայի հայկական պետության պատմության ամենահայտնի և նշանավոր քաղաքական և ռազմական գործիչներից: Մասնավորապես Լևոն Բ Ռուբինյանի անունը «ոսկե տառերով» է գրված Կիլիկիայի հայոց պետության պատմության մեջ, քանի որ նրա մեծագույն ջանքերի շնորհիվ 12-րդ դարի վերջերին Կիլիկիայի հայոց իշխանապետությունը հռչակվեց թագավորություն և միջազգային ճանաչում ձեռք բերեց:

Հոդվածը ներկայացվել է 05.03.2019 թ., գրախոսվել է 09.04.2019 թ., ընդունվել է տպագրության 21.06.2019 է.:

[1] Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. բ, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1956, էջ 103:

Պատմիչ Սմբատ Սպարապետը խոսելով Լևոն Բ Ռուբինյանի մասին՝ նշում է. որ նա բնավորությամբ բարի էր, հիշաչար չէր մարդկանց, չէր պատժում ինչ-որ արարքների համար[1]: Ըստ 13-18-րդ դարերի մանր ժամանակագիրներից մեկի պնդման Լևոն Մեծագործը և իր եղբայր Ռուբենը մեծացել են Պապեռոնի[2] բերդի մեջ՝ իրենց մորեղբայր՝ Բակուրան իշխանի մոտ. «Այլ Ստեֆանէի մնացեալ էին Բ (2) որդիք՝ Ռովբէն և Լևոն, որք սնեալ կային առ քեռին իւրեանց Բակուրան, տէրն Պապեռաւնինե[3], ով Հեթումյանների նշանավոր տոհմից էր:

Ամենայն հավանականությամբ Ռուբինյան եղբայրները Պապեռոն տեղափոխվեցին իրենց հոր՝ Ստեփանեի եղերական մահից որոշ ժամանակ հետո, երբ վերջինս դավադրաբար գերեվարվեց Դաշտային Կիլիկիայում բյուզանդական փոխարքա Անդրոնիկոսի կողմից և տանջամահ արվեց: Խնդիրն այն էր, որ երբ Կիլիկիայում իշխանապետ դարձավ Մլեհը, Լևոնի և Ռուբենի մայրը՝ Ռիտան, հայոց իշխանապետի վրեժխնդրությունից զգուշանալով ապաստան գտավ իր Բակուրան եղբոր մոտ, ով Պապեռոնի բերդի տերն էր: Ինչով էր պայմանավորված Լևոնի մոր անհանգստությունը: Ամենայն հավանականությամբ տիկին Ռիտան հիշում էր, որ ժամանակին Ստեփանեն և Մլեհը ունեցել էին բավական բարդ հարաբերություններ և Ռիտան մտավախություն ուներ, որ Մլեհը կարող էր վնասել իր եղբոր ընտանիքին: Իսկ Պապեռոնի բերդում գտնվելով նրանք կգտնվեին համեմատաբար անվտանգ իրավիճակում:

Ընդհանրապես Լևոն Բ Ռուբինյանի և Ռուբեն Գ-ի հարաբերությունների պատմության մասին հիմնական տեղեկությունները միջնադարյան աղբյուրներում սկսվում են 1180-ական թվականների սկզբներից, այսինքն պատմական այն ժամանակներից, երբ Կիլիկիայի հայկական իշխանապետությունը գլխավորում էր Ռուբեն Գ իշխանը:

Եվ պատմական այդ կարևոր ժամանակահատվածում, երբ Կիլիկիայում իշխանությունը գտնվում էր Ռուբեն Գ-ի ձեռքին, մի կարևոր իրադարձություն է տեղի ունենում, որը մինչ այժմ էլ հետազոտողների կող-

---

[1] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 194:

[2] Պապեռոնի բերդը Կիլիկիայի հին և անվանի ամրոցներից մեկն է, որը գտնվում է Տարսոնից 40 կիլոմետր դեպի հյուսիս արևմուտք, Մ. Յովհաննիսյան, Կիլիկյան Հայաստանի բերդերը և բերդաքաղաքները, Վենետիկ, 1989, էջ 81:

[3] Մանր ժամանակագրություններ, էջ 103:

մից պատշաճ ուշադրության չի արժանացվել և մի շարք հարցերին չի տրվել սպառիչ պատասխաններ: Խնդիրը միգուցե այն է, որ այդ մասին բացառությամբ Սմբատ Սպարապետի, ոչ մի տեղեկություն չկա միջնադարյան աղբյուրներում:

Այսպես՝ մոտավորապես 1180-ական թվականների սկզբներին երկու եղբայրների հարաբերությունները բավական բարդացան և Լևոն Բ Ռուբինյանը ստիպված եղավ փախչել Կոստանդնուպոլիս: Այդ դեպքի կապակցությամբ հայկական և օտար սկզբնաղբյուրներից տեղեկություն է պահպանվել միայն Սմբատ Սպարապետի Տարեգրքում, համաձայն որի. «Երբ Ռուբենը վերադարձավ Երուսաղեմից՝ որոշ չար մարդիկ, փորձեցին կռվեցնել եղբայրներին և Ռուբենին տեղեկացրին, թե իբր եղբայրը՝ Լևոնը, փորձում է ապստամբել իր դեմ. « և Լեւոն եղբայր նորա երկուցեալ ի նմանէ յաղագս ոմանց չարախոսաց, որք ասէին ընդ Ռովբէն թե խորհի Լեւոն յառնել հակառակ քեզ…»[1]: Այլ խոսքով՝ նրանք համոզում են Ռուբենին Գ իշխանապետին, թե իբր եղբայրը աչք է դրել իր աթոռին: Բայց արդյոք այդ չարախոսությունը կարող էր որևէ հիմք ունենալ, որի պատճառով Լևոն Բ Ռուբինյանը դիմեց փախուստի: Դժվար է հստակ գնահատական տալը: Համենայն դեպս եթե նայենք Ռուբինյանների դինաստիայի նախորդ տարիների ողջ պատմությանը, ապա հստակ երևում է, որ նախկինում եղել են նման միջադեպեր և Կիլիկյան Հայաստանում իշխանական աթոռի համար որոշակի պայքար եղել է: Միգուցե հենց դա էլ հաշվի առան թե Ռուբեն Գ-ն, ով այդ ժամանակ գլխավորում էր Կիլիկիայի հայկական իշխանությունը և թե իր եղբայրը՝ Լևոն Բ Ռուբինյանը: Ինչ վերաբերում է չարախոս մարդկանց, ապա նրանց մասին աղբյուրներում որևէ տեղեկություն չի պահպանվել: Ժամանակակից հետազոտողներից Ե. Քասունին է միայն, ով այն տեսակետն է հայտնում, որ ամենայն հավանականությամբ դրանք անտիոքցիներն էին[2]: Թե որքանով է այս տեսակետը մոտ իրականությանը, դժվար է ասել: Համենայն դեպս, մենք վերը նշյալ դեպքի հետ կապված չունենք որևէ այլ հետազոտողի կամ էլ պատմիչի կողմից թողած այլ տեղեկություն:

Փաստորեն, Ռուբինյան եղբայրների հարաբերությունները խիստ լարվում են: Դա է վկայում այն փաստը, որ Լևոն Բ Ռուբինյանը գիտակ-

---

[1] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 193-194:

[2] **Ե. Քասունի,** Ռուբէն Գ Իշխանապետ (1175-1187) Եւ Իր Կտակը, Պէյրութ, 1987, էջ 51:

ցելով, որ Կիլիկիայում մնալը կարող է վտանգավոր լինել իր համար, նախ փախավ Տարսոն քաղաք, իսկ այնտեղից էլ բյուզանդական կայսրության մայրաքաղաք՝ Կոստանդնուպոլիս: Բյուզանդական կայսրը ապագա հայոց արքային սիրալիր ընդունելություն է ցույց տալիս»[1]: Այդ դեպքը պատմիչ Սմբատը դնում է 1181 թվականի տակ[2]:

Հարց է առաջ գալիս, թե ինչու բյուզանդական կայսրությունում Լևոնին ջերմ ընդունելություն ցուցաբերեցին այն դեպքում, երբ Ռուբինյան եղբայրները պայքարում էին նախևառաջ բյուզանդական կայսրության դեմ: Եվ այս հարցին ևս մենք կփորձենք պատասխանել: Մյուս պատմիչների աշխատություններում նշված դեպքի մասին որևէ այլ տեղեկություն չենք հանդիպում, որն էլ անշուշտ դժվարացնում է հետազոտողների գործը:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի տեսակետներ կան ժամանակակից պատմագիտական գրականության մեջ: Այսպես՝ առաջիններից մեկը, ով այդ խնդրին անդրադարձել է, ճանաչված հայագետ Ղևոնդ Ալիշանն է, նա մի տեսակետ է արտահայտում, համաձայն որի Լևոնը չէր կարող տանել իր եղբոր կողմից կատարած շռայլությունները[3]: Այսինքն, նա ակնարկում է, որ Լևոնի ըմբոստացումը եղբոր դեմ պայմանավորված էր հայոց իշխանապետի կառավարման ժամանակաշրջանում կատարած շռայլություններով: Մյուս կողմից էլ ճանաչված հայագետը շատ քիչ հաղորդում է տալիս՝ սահմանափակվելով մի փաստով, որ Ռուբենի կատարած հարսանյաց հանդեսին շռայլություններ էին կատարել, որը կազմակերպվել էր թե Երուսաղեմում, որտեղից հարսնացուին բերեցին և թե Կիլիկիայի մեջ[4]: Նա չի նշում նաև այն աղբյուրը, որից որ օգտվել է: Բայց արդյոք միայն հարսանյաց հանդեսի ժամանակ կատարած շռայլությունները կարող էին հիմք հանդիսանալ, որպեսզի Ռուբինյան եղբայրները թշնամանային:Դրա հիմքում կարող էր լինել ավելի խոր պատճառ, որի մասին մեծ հայագետը չի նշում: Հակառակ Ղևոնդ Ալիշանի առաջ քաշած տեսակետի՝ արդի ուսումնասիրողներից Ժ. Դեդեյանը մի տեսակետ է հայտնում, որ Լևոնի և Ռուբենի բախումը «թյուրիմացության» արդյունք

---

[1] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 193-194:

[2] Նույն տեղում:

[3] **Ղ. Ալիշան**, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 439:

[4] Նույն տեղում:

էր[1] և չի բացառվում որ այդ բախման գործում նաև որոշակի դեր ունենային բյուզանդացիները: Կարծում ենք կարելի է համաձայնվել Ժ. Դեդեյանի առաջ քաշած տեսակետի հետ, քանի որ 12-րդ դարի երկրորդ կեսին իրոք բյուզանդական կայսրությանը ձեռնտու էր թուլացնել օրեցօր հզորացող Կիլիկիայի հայկական պետությունը, որը դեռևս գտնվում էր իր տիրապետության տակ, բայց և ձգտում էր վերածվել թագավորության: Այս խնդրի առնչությամբ կարելի է մի շատ կարևոր տեսակետ ևս առաջ քաշել: Եղբայրների բախումը հնարավոր է կապված էր բյուզանդական կայսրություն-խաչակրաց պետություններ հակամարտությամբ, որի մեջ ներքաշվեց նաև Կիլիկիայի հայոց իշխանապետությունը: Այսինքն հայտնի փաստ է, որ նշյալ ժամանակահատվածում թեև Կիլիկիայի հայկական իշխանությունը օր օրի հզորանում էր, բայց դեռևս մնում էր բյուզանդակայն կայսրության կազմում և դեռևս ինչ-ինչ հարցերում բյուզանդացիները ունեին իրենց որոշակի ազդեցությունը հայկական պետության վրա: Մյուս կողմից էլ միջնադարյան աղբյուրների տեղեկություններից հայտնի է դառնում, որ հայոց իշխանապետը ամուսնացավ Երուսաղեմի թագավորի դստեր հետ և շատ բնական է, որ վերջինս կարող էր թեքվել դեպի կաթոլիկ աշխարհը, ինչը ոչ մի կերպ չէր կարող մտնել բյուզանդական կայսրության շահերի մեջ: Հավանաբար հենց դրա համար էլ միգուցե բյուզանդացիները փորձել են իրենց կողմը գրավել Ռուբեն Գ-ի թէ՝ ավագ եղբորը՝ Լևոն Բ Ռուբինյանին, որպեսզի նրա միջոցով Կիլիկիայի հայոց իշխանապետությունում կատարեն հեղաշրջում և շարունակեն թեկուզև ձևական կերպով պահպանել իրենց ազդեցությունը երկրում:

Դա է վկայում նաև այն փաստը, որ բյուզանդական կայսրությունում Լևոնին ջերմ ընդունելության արժանացրին: Ինչ վերաբերում է Լևոնի կողմից սկզբից Տարսոն փախչելը, իսկ հետո Կոստանդնուպոլիս, այդ հարցում ուսումնասիրողներից Ե. Քասունին նշում է, որ Լևոնը Տարսոն փախավ, քանի որ այդ ժամանակ այդ քաղաքը չէր մտնում եղբոր իշխանապետության տակ[2]: Միայն որոշ ժամանակ անց վերջինս Տարսոնից

---

[1] La Chrinique attribu attribute Connetable Smbat introduction, traduction et notes par Gerard Dedeyan, Paris, 1980, p. 57, հղումը կատարված է Ե. Քասունու աշխատությունից, էջ 48:

[2] **Երուանդ Հ. Քասունի**, նշվ. աշխ., էջ 51:

տեղափոխվեց բյուզանդական կայսրության մայրաքաղաք: Եվ վերջապես նշյալ խնդրին շատ հակիրճ անդրադարձել է հայ եկեղեցու պատմության անզուգական հետազոտող Մ. Օրմանյանը: Նա հղում անելով Սմբատ Սպարապետի պատմությունը՝ նշում է, որ Լևոնը ժամանակին կասկածվում էր եղբոր կողմից և փախել էր Կոստանդնուպոլիս, սակայն 1182 թ. վերադարձել էր Կիլիկիա և հաշտվել[1]: Մյուս հետազոտողները վերը նշված թեմայի մասին որևէ այլ տեսակետ չեն հայտնում:

Նույն Սմբատ Սպարապետի վկայմամբ մոտավորապես մեկ տարի հետո՝ (1182-1183 թվականներին) Լևոն Բ Ռուբինյանը Կոստանդնուպոլսից վերադարձավ Կիլիկիա, հաշտվեց եղբոր հետ և ստացավ երկրի կարևոր բերդերից մեկի՝ Կապանի[2], տնօրինումը որպես հայրենական կալվածք. «Ի թուին ՈԼԱ (631=1182) դարձեալ Լեւոն ի Կոստանդնուպոլսէ և եկն առ եղբայրն իւր Ռովբէն, և նա սիրով ընկալաւ զնա, և ետ նմա զԿապան բերդնե[3]: Հավանաբար մինչ Լևոն Բ Ռուբինյանի Կիլիկիա ժամանելը, Ռուբեն Գ-ի հետ որոշակի բանակցություններ էին ընթացել և հայոց իշխանապետը երաշխավորել էր, որ եղբոր վերադարձից հետո նրա հետ որևէ խնդիր չի կարող լինել: Թե ով ստիպեց կամ էլ միջնորդեց Լևոն Բ Ռուբինյանին հետ վերադառնալու Կիլիկիա և հաշտվելու եղբոր հետ, դժբախտաբար տեղեկություններ չեն պահպանվել:

Անհրաժեշտ է անդրադառնալ մի կարևոր փաստի ևս: Ինչպես նկատեցինք, Լևոնի վերադարձից հետո Ռուբեն Գ-ն սիրով ընդունեց նրան: Հայոց իշխանապետն վերջինիս տվեց նաև Կիլիկյան Հայաստանի կարևորագույն բերդերից մեկի՝ Կապանի բերդի տնօրինությունը: Առաջին հայացքից թվում է, թե Ռուբեն Գ իշխանապետի կողմից նմանատիպ սիրալիր ընդունելություն ցույց տալը և պետության կարևոր ամրոցներից մեկի տնօրինությունը եղբորը հանձնելը խոսում էր այն մասին, որ Ռուբեն Գ իշխանապետը ամբողջությամբ ներել է եղբորը և ցանկանում էր համերաշխ ձևով ապրել նրա հետ: Բայց մյուս կողմից էլ, շատ հավանա-

---

[1] **Մ. Օրմանյան,** Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, սյուն, 1736:

[2] Կապանի բերդը գտնվում է Հայկական Կիլիկիայի հյուսիսարևելյան սահմաններին կից և շատ հարմար դիրք ուներ հյուսիսից եկող թշնամիների բանակների դեպի Մարաշ կամ դեպի Սիս առաջխաղացման արգելք լինելու համար, **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 12, **Մ. Յովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 159:

[3] **Սմբատ սպարապետ**, էջ 193-194:

կան կարող է լինել այն, որ հայոց իշխանապետը դեռևս ամբողջությամբ չէր վստահում եղբորը, քանի որ կասկածում էր, որ բյուզանդական կայսրության մայրաքաղաքում գտնված ժամանակ հնարավոր է Լևոնին որոշակի ձևով պատրաստած լինեին Կիլիկիայում իշխանափոխության համար: Եվ իհարկե Ռուբեն Գ-ի կողմից Կապանի ամրոցի տրամադրումը Լևոնին շատ խորամանկ, միևնույն ժամանակ զգուշավոր քայլ էր: Այսինքն հստակ երևում է, որ Ռուբեն Գ իշխանապետը եղբորը տալով հայոց իշխանապետության կարևոր բերդերից մեկի տնօրինությունը ցանկանում էր եղբորը հեռու պահել իշխանապետության կենտրոնից և քաղաքական գործընթացներից, քանի որ Կապանի բերդը գտնվում էր Կիլիկիայի իշխանության հյուսիսային սահմանի մոտ և բավական հեռու էր կենտրոնից: Այս փաստը խոսում է այն մասին, որ Ռուբեն Գ իշխանապետը դեռևս ամբողջովին վստահություն չուներ Լևոնի նկատմամբ:

Ամեն պարագայում Ռուբինյան եղբայրներին հաջողվեց հաշտվել միմյանց հետ, որը չափազանց կարևոր նշանակություն ունեցավ Ռուբինյան պետության հետագա առաջընթացի և զարգացման համար: Այս դեպքերից հետո Լևոն Բ Ռուբինյանը սկսեց աջակցել իր եղբորը պետության պաշտպանության և պետական կառավարման գործերում, իսկ քիչ անց, երբ հայոց իշխանապետը ընկավ Անտիոքի դուքսի կազմակերպած թակարդը, նա խելացի ձևով կառավարեց երկիրը, մինչ եղբոր վերադարձը:

ԷՋԵՐ ԼԵՎՈՆ Բ ՌՈՒԲԻՆՅԱՆԻ ԵՎ ՌՈՒԲԵՆ Գ-Ի ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1180-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Արամ Հովհաննիսյան

Բանալի բառեր՝ *Կիլիկիա, պետություն, իշխանապետ, Լևոն, Ռուբեն, բյուզանդական կայսրություն, ապստամբել, հաշտվել, ուսումնասիրող, Ռուբինյան*

Աշխատանքը նվիրված է Կիլիկյան Հայաստանի հիմնադիր արքա Լևոն Մեծագործի և եղբոր՝ Ռուբեն Գ իշխանապետի հարաբերությունների պատմության լուսաբանմանը: Հետազոտության մեջ հիմնվելով միջնադարյան սկզբնաղբյուրների ընձեռած տեղեկություններին և ժամանակակից գիտական գրականության մեջ առկա տեսակետներին՝ փորձել ենք առաջին անգամ խորությամբ

ներկայացնել 12-րդ դարի 80-ական թվականների սկզբի Կիլիկիայի հայոց իշխանապետությունում տեղի ունեցած քաղաքական դեպքերը, մասնավորապես հայոց իշխանապետ Ռուբեն Գ-ի և Լևոն Մեծագործի միջև բախման պատմության մանրամասները: Փորձ ենք արել լուսաբանել եղբայրների բախման դրդապատճառների պատմությունը, ինչպես նաև վերհանելու այն կողմերին, որոնց ձեռնտու էր այդ հակասությունների սրումը:

Հոդվածի վերջում ներկայացրել ենք Լևոն Մեծագործի և եղբոր հաշտությունը և Լևոնի վերադարձը Կիլիկիայի հայոց իշխանապետություն:

СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ ВЗАИМООТНОШЕНИЙ ЛЕВОНА II РУБИНЯНА И РУБЕНА III.

Арам Оганнисян

Ключевые слова: *Киликия, государство, правитель, Левон, Рубен, Византийская империя, восстать, помириться, исследователь, Рубинян*

Работа посвящена рассмотрению истории взаимоотношений между основателем Киликийской Армении Левоном II (Великим) и его братом князем Рубеном III. На основе имеющихся в средневековых источниках и современной научной литературе суждений, в исследовании впервые предпринята попытка глубокого рассмотрения политических событий, происходивших в Киликийских армянских княжествах в начале 80-ых гг. 12-го века, в частности подробностей истории столкновения князя Рубена III с Левоном II. Мы постарались также раскрыть истинные причины конфликта между братьями, а также выявить стороны, заинтересованные в обострении этих отношений.

В заключении статьи представлены обстоятельства примирения Левона II с братом и возвращения Левона в Киликийское армянское княжество.

PAGES ON THE HISTORY OF RELATIONSHIPS BETWEEN LEVON RUBINYAN AND RUBEN G (1180-IES)

Aram Hovhannisyan

Keywords: *Cilicia, state, governor, Levon, Ruben, Byzantine empire, revolt, reconciled, researcher, Rubinian*

The work reveals the history of relationships between King Levon the Metsagorts, the founder of Cilician Kingdom, and his brother Ruben C Prince.

Based on the information both from the medieval sources and the contemporary scientific literature we have made an attempt to represent the political events in the Cilician Kingdom in 80ies of the XII century, taking into account particularly the reasons of controversy between Prince Rumen C and King Levon Metsagorts. There was also made an attempt to give the details of the controversy and to reveal the sides involved in creating tension between the brothers.

The article also states the fact of establishment of peace and understanding between the brothers and the return of Crown to Levon Metsagorts.